Սիլվա Կապուտիկյան

Բանաստեղծուհի, արձակագիր, հրապարակախոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության» և «Բնության և հասարակության մասին» գիտությունների միջազգային ակադեմիաների անդամ, ՀԳՄ անդամ

Բանաստեղծուհի, արձակագիր, հրապարակախոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության» և «Բնության և հասարակության մասին» գիտությունների միջազգային ակադեմիաների անդամ, ՀԳՄ անդամ:

Ծնվել է 1919թ. Երևանում, Վանից գաղթած ընտանիքում:

1941թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, 1950թ.՝ Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտը:

Առաջին անգամ տպագրվել է «Պիոներ կանչ» թերթում 1933թ., իսկ բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Օրերի հետ», հրատարակվել է 1945թ.:

Հրատարակել է 60 ժողովածու, որից 40-ը՝ մանկական:

Բանաստեղծուհու գրական ժառանգության մաս են սփյուռքահայ ճամփորդությունների մասին գրված ուղեգրությունները, թարգմանությունները և հրապարակագրությունը:

Երկրի հասարակական կյանքի արձագանքն է «Էջեր փակ գզրոցներից» գիրքը:

Կապուտիկյանի ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով. ռուսերեն հրատարակված ժողովածուների թիվն անցնում է 20-ից:

Հրատարակված գրքերից են՝ «Սրտաբաց զրույց» (1955թ.), «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961թ.), «Դեպի խորքը լեռան» (1972թ.), «Գիրս մնա հիշատակող» (2000թ.), «Տագնապ» (2003թ.) և այլն:

Նախկին Խորհրդային Միության, Հայաստանի Հանրապետության, Աջարիայի Ինքնավար Հանրապետության պետական, Ավետիք Իսահակյանի անվան, իտալական «Նոսիդե» գրական մրցանակների դափնեկիր է:

Արժանացել է Հայաստանի և Վրաստանի արվեստի վաստակավոր գործչի, Քեմբրիջի միջազգային աշխարհագրական ինստիտուտի շնորհած «Տարվա կին» կոչումների: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով:

Մահացել է 2006թ.: